ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2013թ. հուլիսի 24 N 69 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >>, <<ՆՈՐ- ԱՄԱՆՈՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >>, <<ՆՈՐ - ԵԴԵՍԻԱՅԻ Ն. ՇՆՈՐՀԱԼՈՒ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, << ՈՍԿԵՀԱՏԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> , <<ԱՐՈՒՃԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, << ՕՀԱՆԱՎԱՆԻ Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ԵՎ << ՈՍԿԵՎԱԶԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ- ՆԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ– 728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները

Կարգադրում եմ՝

1. 2013 թվականի ներքին աուդիտի բաժնի հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Արագածոտնի միջնակարգ դպրոց>>, <<Նոր-Ամանոսի միջնակարգ դպրոց>>, <<Նոր-Եդեսիայի Ն. Շնորհալու անվան միջնակարգ դպրոց>>, <<Ոսկեհատի Խրիմյան Հայրիկի անվան միջնակարգ դպրոց>>, <<Արուճի միջնակարգ դպրոց>>, <<Օհանավանի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց>> և <<Ոսկեվազի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններում անցկացնել 2010, 2011 և 2012 թվականների բյուջետային տարվա գործունեության աուդիտ, բաժնի պետ՝ Սարգիս Մուրադյանի, բաժնի գլխավոր մասնագետներ՝ Իշխան Բարսեղյանի, Արիս Թովմասյանի և Կարեն Սուքիասյանի կողմից, աշխատանքներին մասնակից դարձնելով վերոհիշյալ ՊՈԱԿ-ների տնօրեններին և հաշվապահներին:

2. Աուդիտի անցկացման ժամկետ սահմանել 21 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2013 թվականի օգոստոսի 5-ից ավարտել 2013 թվականի սեպտեմբերի 2-ից:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ